Հարցաթերթ

Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի հանրապետական փուլի – 2016թ./տևողությունը՝ 150 րոպե/

9-րդ դասարան

1. **Ի՞նչ կլինի, եթե մթնոլորտում ավելանա ածխաթթու գազիքանակը (նշել չորս հետևանք)**……1միավոր

2. **Թվարկել իրանական լեզվախմբի ժողովուրդներից չորսը**……...1միավոր

3. **Ի՞նչ տարբերություն կա պետությունների դասակարգման և տիպաբանության միջև**……...1միավոր

4. **ՀՀ-ում որտե՞ղ է գետային ցանցի խտությունն ավելի մեծ՝ ծալքաբեկորավոր, թե՞ հրաբխային լեռների շրջանում: Բացատրել պատճառները**……...1միավոր

5. **Բացատրել Կարմիր ծովի ջրի բարձր աղիության պատճառները (բերել 4 փաստարկ)**……...1միավոր

6. **Արաքսի ձախակողմյան տրված վտակները դասավորել դրանց ջրառատության նվազման կարգով**……1միավոր
   1) Մեծամոր (Սևջուր) 3) Ախուրյան
   2) Ողջի 4) Արփա:

7. **Տրված պետությունները դասավորել եգիպտացորենի համախառն բերքի աճման կարգով**……1միավոր
   1) Չինաստան 3) Բրազիլիա
   2) ԱՄՆ 4) Մեքսիկա:

8. **Տրված ութ մոլորակներից վերադասավորել երկրային խմբի մոլորակները՝ սկսած Արեգակից ունեցած հեռավորության**……1միավոր
   1) Լուսնթագ 5) Հրատ
   2) Փայլածու 6) Արուսյակ
   3) Երկիր 7) Նեպտուն
   4) Ուրան 8) Երևակ:

9. **Գրել այն ժողովուրդների համարները, որոնք մտնում են սլավոնական լեզվախմբի մեջ**……1 միավոր
   1) գերմանացիներ 5) ռումիններ
   2) չեխեր 6) լեհեր
   3) սերբեր 7) բուլղարներ
   4) հույներ 8) մոլդավներ:

10. **ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……..1,5 միավոր
   1) Բնակչության բնական աճը կազմում է մոտ 9‰:
   2) Թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
   3) Մինչև 1000 մ բարձրություններում կենտրոնացած է ՀՀ բնակչության շուրջ 54%-ը:
   4) Սահմանակից պետությունների համեմատ ՀՀ-ն ամենախտաբնակ պետությունն է:
   5) Բնակչության մշտական բնակեցման գոտին ընդգրկում է 400-2400 մ բարձրությունները
   6) Աշխատանքային ռեսուրսները կազմում են ՀՀ բնակչության 75%-ը:

11. **Գտնել օրինաչափությունը և ավելացնել ևս երկուսը**……..…….....2 միավոր
ա) կրաքար, տորֆ, նավթ, այրվող թերթաքար,
բ) Սևանի, Գյումուշի (Արգելի), Երևանի, Արզնու,
գ) կծմախոտ, սեզ, երեքնուկ, ոզնախոտ,
դ) Նիագարայի, Շաքիի, Անխելի, Վիկտորիայի:

12. **Կազմել համապատասխան եռյակներ**……...……..2 միավոր
Նեպալ, Պո, Գրենլանդիա, Բորդո, Կոպենհագեն, Ֆրանսիա,
Էվերեստ, Էլբա, Կատմանդու, Դանիա, Սեն, Իտալիա:

13. **Ի՞նչ արագությամբ պետք է թռչի ինքնաթիռը, որպեսզի 16 ժամում շրջանցի ողջ հասարակածը**……...1 միավոր

14. **Գետի ակունքի բարձրությունը 2400 մ է, իսկ գետաբերանինը՝ 600 մ: Նրա երկարությունը 300 կմ է: Որոշել գետի թեքությունը**……...1 միավոր

15. **Երկրի բնակչության թիվը 40 մլն է, քաղաքաբնակների բացարձակ թիվը՝ 16 մլն մարդ: Որոշել ուրբանիզացման մակարդակը**……1 միավոր

16. **Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 5 մլն տ.կմ է, բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 250 կմ: Որքա՞ն կկազմի տարեկան փոխադրվող բեռների ծավալը**……..…….....1 միավոր

17. **Քամիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ**……..1,5 միավոր
1) Մուսսոններն ամռանը փչում են ցամաքից դեպի ծով,
ձմռանը՝ ծովից դեպի ցամաք:
2) Հյուսիսային կիսագնդում ցիկլոնի պտույտը ժամացույցի սլաքի շարժման ընթացքին հակառակ է:
3) Անտիցիկլոնին բնորոշ է օդի վերընթաց շարժումը, Ամպամածությունը և տեղումների առատությունը:
4) Քամու արագությունը չափում են հողմացույց (ֆլյուգեր) կոչվող սարքով:
5) Քամու արագությունը կախված է ճնշումների տարբերությունից:
6) Լեռնահովտային քամիներն առաջանում են ծովափնյա շրջաններում:

Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Թ. Գրիգորյան

Պատասխաններ

/Գնահատման քայլը՝ 0,25 միավոր/

9-րդ դասարան

1. Ածխաթթու գազի քանակի ավելացումը կառաջացնի «ջերմոցային» երևույթի ուժգնացում, որը կառաջացնի տարբեր հետևանքներ.
   ա) կբարձրանա երկրագնդի միջին ջերմաստիճանը,
   բ) սառցադաշտերի հալքը կմեծանա,
   գ) կբարձրանա օվկիանոսի մակարդակը և կկրճատվեն ցամաքային տարածքները,
   դ) կվատանան օրգանական աշխարհի գոյության պայմանները:
2. Պարսիկներ, օսեր, քրդեր, աֆղաններ:
3. Պետությունները դասակարգվում են ըստ քանակական ցուցանիշների (օրինակ, ըստ տարածքի մեծության, բնակչության թվի): Պետությունները տիպաբանական խմբավորման են ենթարկվում ըստ որակական ցուցանիշների (օրինակ, ըստ տնտեսաաշխարհագրական դիրքի, տնտեսական զարգացման մակարդակի, կառավարման ձևի, վարչաքաղաքական կառուցվածքի և այլն):
4. ա) գետային ցանցն ավելի խիտ է ՀՀ ծալքաբեկորավոր լեռների, քան հրաբխային շրջաններում: Նախ, ծալքաբեկորավոր լեռների շրջանում ապարներն ավելի ջրամերժ են և կլիման համեմատաբար խոնավ է, իսկ հրաբխային ապարները ճեղքոտված են, կլիման ավելի չոր է, իսկ գոլորշացումը՝ մեծ:
5. ա) ջրից մեծ քանակի գոլորշացումը,
   բ) անապատներով շրջապատված լինելը և շատ քիչ տեղումները,
   գ) գետերով քաղցրահամ ջրի մուտքի բացակայությունը,
   դ) թույլ կապը համաշխարհային օվկիանոսի հետ:
6. 1), 3), 4), 2):
7. 4), 3), 1), 2):
8. 2), 6), 3), 5):
9. 2), 3), 6), 7):
10. 1) սխալ է 4) ճիշտ է
    2) սխալ է 5) ճիշտ է
    3) ճիշտ է 6) սխալ է:
11. ա) օրգանական ծագման նստվածքային ապարներ-բնական գազ, ածուխ:
    բ) Սևան-Հրազդան կասկադի ջրէկ-եր-Հրազդանի (Աթարբեկյանի), Քանաքեռի:
    գ) տափաստանային բուսատեսակներ-փետրախոտ, սիզախոտ:
    դ) ջրվեժներ – Թռչկանի, Իգուասուի:
12. Տրված են պետություններ և նրանց տարածքում գտնվող աշխարհագրական օբյեկտներ.
    ա) Նեպալ, Կատմանդու, Էվերեստ,
    բ) Իտալիա, Պո, Էլբա,
    գ) Դանիա, Կոպենհագեն, Գրենլանդիա,
    դ) Ֆրանսիա, Սեն, Բորդո:

13. V = S : T S = 40.000 կմ T = 16 ժամ
    V = 40.000 : 16 = 2500 կմ/ժ:
    Պատասխան՝ 2500 կմ/ժ:

14. Գետի անկումը կլինի՝ 2400-600մ=1800 մ:
    թեքությունը կլինի՝ 1800մ:300կմ= 6մ/կմ:
    Պատ.՝ 6 մ/կմ:

15. 40.000.000 - 100% $x = \frac{16.000.000.100}{40.000.000} = 40\ \%$
    16.000.000 – x
    Պատ. 40 %

16. 5.000.000 տ.կմ:250 կմ = 20.000 տ.
    Պատ. 20.000 տոննա

17. 1) սխալ է 4) սխալ է
    2) ճիշտ է 5) ճիշտ է
    3) սխալ է 6) սխալ է: